

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության <<Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ /թերապիա/, կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ.

2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ.

3. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/.

4. կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն.

5. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն. ներառյալ՝

ա) ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման.

բ) անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման.

գ) աշխատանքների բաշխման.

դ) կարգապահական պատասխանատվության.

ե) խրախուսանքի միջոցների կիրառման.

6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ.

8. բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում.

9. չի լրացել հավակնորդի 65 տարին.

10. օտար լեզվի իմացություն.

11. Մրցույթը կանցկացվի 2019 թ. սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 11⁰⁰-ին:

12. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/, որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

13. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագրի և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9⁰⁰-15⁰⁰, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Դիմումների ընդունման ժամկետն է 2019 թվականի հուլիսի 19-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 20-ը:

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ.՝ 060650626:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ